ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Մարտի 6-ին, Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանին մեջ, Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքի նախագահությամբ, տեղի ունեցավ մասնավոր հանդիսություն մը, նվիրված Աստվածաշունչի հայերեն առաջին տպագրության երեքհարյուրամյակին։

Հանդիսության որպես պատվո հյուրեր ներկա էին նաև հայրենի երկու մտավորականներ՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը և ավագ գիտաշխատող Ս. Արևշատյանը։

Հանդիսության բացումը կատարեց գերաշնորհ Տ. Շահե եպիսկոպոս Աճեմյանը։

Հանդեսի ժամանակ գործադրության դրվեցավ գեղարվեստական հայտագիր մը, օրվան տոնի նշանակության նվիրված շարականներե, արտասանություններե և երգերե բաղկացած, որոնք փայլուն հաջողությամբ կկատարվին Ժառանգավորաց վարժարանի սաներու կողմե։

Օրվան գլխավոր բանախոսն էր Ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Բաբուճյանը, որ վեր առավ «Հավիտենական մատյան»-ին կրոնական, մշակութային դերը անցյալ սերունդներուն և անոր կարիքը ներկա ժամանակներու սերունդներուն համար։

Ժառանգավորաց վարժարանի և Ընծայարանի գրականության ուսուցիչ Մանվել Քյոսեյանը ներկայացուց «Ոսկանյան տպագրական վաստակը» և հայ տպագրության պատմությունը։

Հայտագրի լավագույն, ոգևորիչ համարներեն մեկը եղավ Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծության բնագրի վրա գրված խմբերգը, երաժշտություն՝ Համբարձում Բերբերյանի, որ կատարվեցավ Սահակ Գալայճյանի շնորհալի ղեկավարությամբ։

Հանդիսության փակումը կատարեց Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքը, որ շեշտեց Աստվածաշունչի հայ ժողովուրդի սրտին մոտիկ ըլլալու հանգամանքը և օրհնեց խնկելի հիշատակը հայ մշակույթի բոլոր երախտավորներուն։

Երուսաղեմ,
7 մարտ 1966

ԹՂԹԱԿԻՑ